

# ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Իրենց տեսակիցներու հետ ընկերութեամբ կենցաղավարելը ցանկալի է բոլոր կենդանիներուն, առաւել եւս մարդկային ցեղին, որուն ներկայացուցիչները շատ բաներու մէջ յաճախ փոխ առ փոխ միմիանց օգնութեան կարիքը կ'ունենան՝ ճախորդ պատահարի, հիւանդութեան, կարեւոր բաներու պակասութեան ժամանակ: Եւ քանի որ մարդիկ տկար ու սղօք կը ծնին, բոլոր կենդանիներէն ալ աւելի ունին խնամքի եւ ուսման կարիք՝ ապրելու եւ երջանիկ ըլլալու համար: Բայց ասոնք չեն կրնար գտնել առանձնակեցութեան մէջ, այլ միայն ընկերային միջավայրի մէջ:

Յայտնի է փորձով, որ բնական է մարդուն ընկերային կենցաղավարութեան ձգտիլը, որովհետեւ ահա անմարդ անապատի մէջ գտնուող մարդը կը տրտմի ու կը տառապի եւ մարդկանց խուռն բազմութիւն տեսնելով կ'ուրախանայ ու կը միխիթարուի:

Սակայն պէտք է ընտրել այնպիսի ընկեր, որ ուրախութեան մէջ ուրախակից ըլլայ եւ տրտմութեան մէջ կարեկից ու միխիթար: Եւ որքան քաղցր ու ցանկալի է բարի ընկերը, այնքան դառն ու տաղտկալի է չար ընկերը: Առաջինը դժուարին դիպուածներու ժամանակ գիտէ ցաւերու ծանրութիւնը վերցնել ու տառապանքը թեթեւցնել, իսկ երկրորդը՝ անակնկալ վտանգներ կը պատճառէ ու վշտի վրայ վիշտ կ'աւելցնէ...

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

## ԿՐԾՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

### ԿԱՆԱՐԳՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

#### ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Բոլոր անոնք, որոնք կախարդութիւնն ու գուշակութիւնը անմեղ բան կը համարեն, թող լա՛ւ լսեն խօսքերը: Թող լսեն նաեւ անոնք, որոնք մարմնական ցաւէ մը ազատելու համար Սատանային կը դիմեն: Սատանան սարսափելի տիրակալ է: Սկիզբը իր ցանցը կը ձգէ դիւրահաւատները, կը համոզէ՝ որ անոր մէջ աստուածային ծածուկ բան մը կայ: չէ՞ որ անիկա ըրած ատեն Աստուծոյ անունը կու տան եւ աղօթքներ կը մըմնջեն: Յետոյ հեզանքով կ'ըսեն. «Քու մեղքդ աններելի է: Աւելի լաւ կ'ըլլայ որ պարանը առնես ու կախուիս»: Եթէ ժամանակին Սատանային դիմեր էք, ապա շխարհեցէ՛ք եւ ջանադրաբար աղօթեցէ՛ք, որ Աստուած փշրէ՛ ձեր մեղքերուն կապանքները: Փա՛ռք Տիրոջ, Ան կրնայ կոտրել բոլոր շղթաները: Կը լսե՞ս, բոլոր կապանքները:

Սակայն, Սատանային շղթաներէն ձերբազատուելու միջոցներուն մասին խօսելէ առաջ, ծանօթանանք գուշակութեան, խաղաթուղթով բախտ բանալու, ոգեկանչութեան եւ այլ սատանայական հնարքներուն, եւ տեսնենք թէ անոնց միջոցաւ ո՞ր կ'երթանք եւ ի՞նչ կը ժառանգենք:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱՏՈՒՅԻՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ



ՏՕՁ ԵՄԵՑ, ԱԾ ԱՂԾՁՁՁԵ ԾԾՂ ¼ ԱՑ ԱԾ ԲՁՁՁՁՁՁՁՁ ԵՂԵ (ԵՄ119.105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 29 ՅՈՒԼԻՍ, 2012 ԹԻՒ 31

### ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՆՈՍԻ 19.3-12

Փարիսեցիներ Յիսուսը փորձելու մտադրութեամբ մօտեցան անոր եւ հարցուցին. «Իրաւունք ունի՞ մէկը որեւէ պատճառով իր կինը արձակելու»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Չէ՞ք կարդացած Սուրբ Գիրքերուն մէջ, թէ Աստուած սկիզբէն արու եւ էգ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ անոնց. “Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միանայ եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան”: Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուրեմն որեւէ մէկը թող չբաժնէ անոնք որ Աստուած միացուց»:

Փարիսեցիները դարձեալ հարցուցին. «Հապա ինչո՞ւ Մովսէս օրէնք սահմանեց՝ բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակել գայն»: Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեր խստասրտութեան պատճառով արտօնեց արձակել ձեր կիները, սակայն ստեղծագործութեան ժամանակ արձակելու խօսք չկար: Գիտցէ՞ք նաեւ, թէ ով որ իր կինը կ'արձակէ առանց պոռնկութեան պատճառի եւ ուրիշ մը կ'առնէ՝ շնուլիւն ըրած կ'ըլլայ. եւ ով որ արձակուած կինը կ'առնէ՝ ան ալ շնուլիւն ըրած կ'ըլլայ»:

Աշակերտները ըսին Յիսուսի. «Եթէ ամուսնութիւնը այդպէս դատապարտութեան պատճառ կրնայ ըլլայ այր մարդուն եւ կնոջ համար, աւելի լաւ է չամուսնանալ»:

Յիսուս ըսաւ. «Բայց ամէն մարդ չի կրնար առանց ամուսնութեան մնալ, այլ միայն անոնք որոնց Աստուած կարողութիւն տուած է: Որովհետեւ մարդիկ չեն ամուսնանար այն պարագաներուն, երբ ծնունդով ներքինի են, կամ մարդոց կողմէ ներքինի եղած են եւ կամ իրենք զիրենք ներքինի դարձուցած են Աստուծոյ արքայութեան համար: Ով որ կրնայ ընդունիլ իմ հաստատումս, թող կատարէ գայն»:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ԳՐԻԳՈՐԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Վրթանէսի անդրանիկ որդին, Գրիգոր Լուսաւորիչի թոռնիկ, որ ըստ պատմութեան Խորենացիի կողմէ, եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Փայտակարան նահանգին, կամ ըստ յետնագոյն վկայութեանց, Վրաց եւ Ադուանից: Իր դէմքը մեր եկեղեցական պատմութեան մէջ կը ներկայացնէ Հայ Եկեղեցւոյ կողմէն դրացի հեթանոս ազգերուն մէջ քրիստոնէութիւնը քարոզելու համար ի գործ դրուած ջանքը, որ յաջողութեամբ նահատակութիւններու ալ պատճառ դարձաւ: Հետեւաբար, կը պատմուի իրեն համար թէ անարժան ցեղապետներու դէմ կշտամբող դիրք բռնած ըլլալու համար ձիու ագիին կապուելով քաշկոտած է քարերու եւ թուփերու վրայէն, Կասպից ծովուն մօտ Վատնեան դաշտին մէջ եւ այսպէս մեռած, եւ Փոքր Սիւնիքի Ամարաս աւանին մէջ թաղուած է իր սարկաւազներուն ձեռքով: Իսկ Ե. դարուն, Ադուանից Վաչագան թագաւորին օրով իր նշխարները գտնուած ըլլալով, անոնց վրայ եկեղեցի մը շինուեցաւ Ս. Գրիգորիս անունով, 489-ին:

## ԳՆԱԻԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Յուսիկի յաջորդ կը հրաւիրուի Դանիէլ ասորի եպիսկոպոսը, որ Լուսաւորիչի աշակերտներէն կը նկատուի, եւ կառավարիչն էր Տարօնոյ վանքին: Սրբակեաց անձի մը համբաւն ունէր ան, եւ հեթանոսներու մէջ քրիստոնէութիւն քարոզած էր, իսկ ծերութեան օրերուն միայնացած կ'ապրէր Տարօնոյ Դրախտ Հացեաց կոչուած վանքին մէջ:

Այսօր հեղինակաւոր օտարական մը կաթողիկոսական աթոռ բարձրացնելով՝ հաւանական է որ Տիրան նպատակ ունէր Լուսաւորիչի ցեղէն իրելու կաթողիկոսական իշխանութեան ժառանգութիւնը: Դանիէլ սակայն առաջին օրէն զգացուց թէ այդ տեսակետով փնտրուած անձը չէր ինքը: Երբ ընտրուելէ վերջ առաջին անգամ տեսաւ Տիրանը, սաստիկ յանդիմանեց զայն՝ յանիրաւի սպաննած ըլլալուն համար Յուսիկը: Ասոր համար թագաւորը խեղդամահ ընել տուաւ զայն, 348-ին: Երկու աշակերտները, Եպիփան եւ Շաղիտա թաղեցին զայն իր մենարանին մէջ, Հարֆ գաւառի Հաղեաղ Դրախտ աւանին մէջ:

## ՄԻԱՍՆԱԲԱՐ ԱՂՕԹԵՆՔ

### ԱՌԱԻՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ (ՍԱՂՄՈՍ 3)

Տէ՛ր, ինչքա՛ն շատ են զիս նեղողները, ինչքա՛ն շատ են ինձի դէմ ելողները: Շատերը ինձի համար կ'ըսեն. «Անկարելի է, որ Աստուած զինք փրկէ»: Բայց դուն ո՛վ Տէ՛ր, դո՛ւն ես պաշտպան վահանս, դո՛ւն ես փառքս, գլուխս բարձր պահողը: Ամբողջ ձայնով Տիրոջ աղաղակեցի եւ իր սուրբ լեռնէն պատասխան տուաւ ինձի: Ես կը պառկիմ կը քնանամ, վստահ՝ որ գիշերն ամբողջ Տէ՛րը զիս կը պահպանէ: Ուստի բնա՛ւ չեմ վախնար բիրաւոր այն մարդոցմէ, որոնք ամէն կողմէ զիս կը պաշարեն: Ե՛լ, ո՛վ Տէ՛ր, փրկէ՛ զիս, ո՛վ իմ Աստուածս, ապտակ մը տո՛ւր թշնամիներուս, փրկէ՛ ամբարիշտներուն ակոսները: Փրկութիւն դո՛ւն կու տաս, Տէ՛ր, թող օրինութիւնդ ժողովուրդիդ վրայ ըլլայ:

# ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

## ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

### ԳՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գողը Աստուծոյ հակառակ է եւ սուրբերուն անհնազանդ եւ բոլոր մարդոց թշնամի: Աստուծոյ հակառակ է, որովհետեւ Ան Աղամին ըսաւ. «Ճակտիդ քրտինքով պիտի ուտես հացդ» (Մնն. 3:19): Հետեւաբար, ուրիշներու ու աշխատանքին արդիւնքը գողցողը հակառակ է Աստուծոյ հրամանին եւ անհնազանդ՝ սուրբերուն: Դաւիթ մարգարէն կ'ըսէ. «Երանիք զի եւ բարի ըլլայ եթէ ձեռքիդ վաստակը ուտես» (Սաղմոս 128:2): Պօղոս առաքեալ կը գրէ. «Ան որ կը գողնայ, այլեւս չգողնար՝ այլ իր ձեռքով շահի եւ տայ անոր որ պէտք ունի» (Եփեսոս. 4:28): Իսկ գողը բոլոր մարդոց թշնամի է, անոր համար որ եթէ կարենար ամէնքէն կը գողնար, բայց չընէր որովհետեւ չի կրնար:

Գողութիւնը երեք տեսակ է. ա) Անոնք որոնք բռնաւոր են, լեռներու մէջ եւ ճամբաներու եզրին նստելով կը սպաննեն, կը կողոպտեն ու կը յափրջտակեն կատաղի գազանի նման. իսկ տկարները մոռկերու նման՝ որոնք ժայռերու մէջ կը պահուրտին, ծածուկ կերպով կը շորթեն ու կը գողնան: բ) Կան որոնք այգիներէն, ծառերէն, արօտավայրերէն ու դաշտերէն անխորտարար կը գողնան իրենց ընկերներէն: գ) Իսկ ուրիշներ առեւտուրի մէջ կը խաբեն՝ աւելի կ'առնեն ու պակաս կու տան, ինչ որ չափազանց զէջ է եւ աններելի:

Արդ, բոլոր գողութիւններն ալ չար են եւ հակառակ՝ Քրիստոսի, որ սորվեցուց քրիստոնէաներուն. «Եթէ մէկը հագուստդ առնէ, միւսը եւս տուր»: (Ղուկ. 3:11):

(Յովհաննէս Երզնկացի Վրդ.)

# ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ԱՄէն ԲԱՆԵՐԸ ԲԱՐԻԻ ԳՈՐԾԱԿԻՑ Կ'ԸԼԼԱՆ ԱՆՈՆՑ ՈՐ ԶԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՍԻՐԵՆ Հոռմ.8:28:

Ասիկա պէտք է ասանկ ըլլայ երեք պատճառներով: Առաջին.- որովհետեւ ամէն բաները բացարձակապէս տիեզերքի միակ Արարիչին ու կառավարիչին իշխանութեան տակ են: Անիկա իր գահին վրայ է:

Երկրորդ.- որովհետեւ Աստուած իր գաւակներուն միայն ու միայն բարիք կը կատարէ:

Երրորդ.- որովհետեւ Սատանան կարող չէ մեր մէկ մագին իսկ դպչիլ առանց Աստուծոյ թոյլատուութեան կամ հրամանին: Ու եթէ Ան թոյլ տայ դարձեալ մի միայն մեր բարիքին համար է: Չենք հաստատել թէ աշխարհի մէջ ամէն բան բարի է, սակայն Աստուած միջոց ունի եւ կարող է ամէն բան բարի գործակից ընել զինքը սիրողներուն համար: Աստուծոյ գաւակներուն ոչինչ կը պատահի պատահաբար: Ան է որ ամէն բաները կը շարժէ, կը կառավարէ ու յառաջ կը տանի մէկ նպատակով, մեզի բարիք ընելու համար:

## ԱՌԱԿԱՑ

Եթէ սրտս բարիք գործել տի՛ ըսեր. «Գնա՛, վաղը ես կուր, սու՛ ըսա», որովհետեւ Չես գիտեր, թէ վաղը ինձ ԿԸ ՊԱՏԱՀԻ ԲԵՉԻ:

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳԻՐՔԵՆ**

5.1-10

Լսեցե՛ք սիրոյ երգը որ ձեզի պիտի երգեմ ի դիմաց սիրականին որ կ'երգէ իր սիրելի այգիին:

*«Նս, սիրականս, այգի մը առի բաբերբեր բլուրի մը վրայ. ցանկով պատեցի, ձողերով պատ քաշեցի անոր շուրջը, եւ ընտիր խաղողի որթատունկ տնկեցի: Այգիին կեդրոնը աշտարակ մը կանգնեցի եւ հնձան մըն ալ փորեցի, եւ ապա սպասեցի որ ընտիր խաղող տայ, բայց միայն ագոխ տուաւ:*

*Արդ, ո՛վ բնակիչներ Յուդայի ու Երուսաղէմի, դուք դատեցե՛ք իմ եւ այգիիս խնդիրը: Ուրիշ ի՞նչ պէտք էր ընէի այգիիս համար եւ չրրի, եւ ահա խաղողի փոխարէն ագոխ տուաւ ինձի:*

*Հիմա ես ձեզի ըսեմ թէ ինչ պիտի ընեմ այգիիս-- պիտի քակեմ ցանկապատը, որպէսզի գազաններուն նարակ դառնայ, պիտի փլցնեմ պատերը, որպէսզի ոտքի կոխան ըլլայ: Խոպան պիտի ձգեմ. ո՛չ պիտի յօտեմ եւ ոչ ալ բրեմ. պիտի թողում որ փուշ ու տատասկ բուսցնէ, եւ ամպերուս պատուէր պիտի տամ որ չանձրեւեն այգիիս վրայ»:*

Երկնաւոր Զօրքերու Տիրոջ այգին Իսրայէլի տունն է, իսկ անոր սիրած նոր որթատունկը՝ Յուդայի բնակիչները: Անոնցմէ իրաւունք ակնկալեց, բայց անիրաւութիւն գտաւ. արդարութիւն կամեցաւ, բայց աղաղակող անարդարութիւն տեսաւ: Վա՛յ անոնց որոնք իրարու ետեւէ տուն կը գնեն, նոր կալուածներ կը բարդեն իրենց ունեցածներուն վրայ, ընկերոջ բան չձգելու համար: Միթէ առանձի՞ն պիտի ապրիք աշխարհի վրայ:

**Շարունակել Աստուածաշունչէն**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ**

**ՆԱՄԱԿԸ**

**ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ**

6.15—7.11

**Զե՛ք գիտեր թէ ձեր մարմինները Քրիստոսի անդամներն են:** Քրիստոսի անդամները առնենք պոռնիկի անդամ դարձնենք: Բնաւ երբեք: **Զե՛ք** որ գիտէք թէ պոռնիկին միացողը անոր հետ մէկ մարմին կը կազմէ, որովհետեւ գրուած է. *«Երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»:* Նոյնպէս ալ, ով որ Տիրոջ միացայ՝ անոր հետ մէկ հոգի կ'ըլլայ: Հետեւաբար պոռնկութենէ հեռու փախէ՛ք: Բոլոր միւս մեղքերը որ մարդ կը գործէ, իր մարմինն հետ կապ չունին. բայց պոռնկութիւն ընողը իր մարմինն դէմ կը մեղանչէ: **Զե՛ք** գիտեր որ ձեր մարմինները տաճարն են Սուրբ Հոգիին որ Աստուծմէ առիք եւ ձեր մէջ կը բնակի: Գիտցե՛ք որ դուք չէք ձեր անձերուն տէրը, այլ Աստուած որ փրկագիրնով ձեզ գնեց: Հետեւաբար այնպէս ապրեցե՛ք, որ Աստուած փառաւորուի ձեր մարմիններով:

**Ձեր նամակին մէջ ինձի գրած էիք** նաեւ այն մասին՝ թէ մարդ լաւ կ'ընէ եթէ բնաւ չամուսնանայ: Բայց որպէսզի պոռնկութեան մէջ չիյնաք՝ ամէն մարդ իր կինը թող ունենայ եւ ամէն կին՝ իր ամուսինը, որպէսզի կնոջ պէտքերը այրը գոհացնէ եւ ամուսնոյն պէտքերը՝ կինը: Որովհետեւ կինը իր մարմինն տէրը չէ, այլ՝ ամուսինը. ո՛չ ալ այրը իր մարմինն տէրն է, այլ՝ կինը: Երկար առեւ հեռու մի մնաք իրարմէ:

**ՇԱՐՈՒՄԱԿԵԼ  
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ  
ՄՍՏՈՒՄԾԱՇՈՒՄՆԵՐԸ:**